

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

23 SEP 2009

215

Հ-70

ԿՈՂՅԱՐՔԻ ՑԱՆԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. Գ. Ա Ս Խ Ե Կ Ո



ԱՄՎԱԾ
ԿԱ ◆
ԱՐԴՅՈՒՆ

Թուրք. Գ. Հակոբյանի

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1926

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍ. ԽՈՐ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք:

Պ. ՎԼԱՍԵՆԿՈ

215

4-70

ԱՍՎԱԾ ԿԱՌ ԱՐԴՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅ

Թարգմանություն Գար. Հակոբյանի



12.08.2013

3552

I

Ի՞նչ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՅԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԱՎԱ- ՏՈՒՄ




Բոլորը խոսում են
աստվածների մասին
մեկը հայոցում է,
մեկը ձեռքերը շար-
ժում, իբր վոչինչ
հասկանալ չի կարո-
ղանում, մյուսը ինչ-
վոր ապացուցում է
ու անկյունում խա-
չակնքում, մեկն ել
յեկեղեցի գնում ու
մոմ վառում։

Ինչու մենք, պա-
տանի Լենինական-
ներս ել չխոսենք
աստվածների մա-
սին։

Իսկ վորպես զի

Նկ. 1. Քաղդեական աստված գործն ավելի պարզ
հարավ-արեվմտյան հողմի լինի, յեկեք մի տեղ
հավաքենք ու մի լավ քննենք բոլոր այն աստ-

վածներին, վորոնց մասին մարդիկ խոսում են: Թեև ինչպես կարելի յէ այդ: Բոլորին մի տեղ հավաքել վոչ մի գեպօռմ չի կարելի. նրանք շատ շատ են: Ուրեմն մենք ընտրենք ամենահետաքրքրականներին:




Նկ. 2. Յեզիրական Անա և մի ուրիշը: Կարտասված Գորուս ծես թե նույնպես մարդ ե՝ թե ձեռքեր, թե վորքեր ունի, բոլորը տեղն ունեղն ե: Բայց ելի զույնն անհարմար ե—մարտուն չե, ինչ վոր թուշունի յէ, նմանվում ե բազեի (տես նկ. 2):

Ամենից առաջ ահա ձեզ մեկը (տես նկ. 1): Կարծես թե մարդու նման ե, միայն թե մատների վրա յեղունկներ ունի և թուշունի պես ուսերին ել թևեր, բայց գլուխը մարդկային չե, ինչ վոր սարսափելի բան ե:

Այդ աստված եր, վորին հավատում ելին խալդեացիք (այդպիսի ժողովուրդ կար): Կարծում ելին թե այդ աստվածը բերում ե չոր և տաք քամի, վորից այրվում ելին գաշտերը ու փշանում եր ցորենը:


Դրան հավատում են ուրիշ մարդիկ—յեզիրականցիք: Կարծում ելին, թե դա ինչ վոր տեղ ապրում ե և մարդկանց հետ կարող ե վարվել այնպես, ինչպես իրեն ցանկալի կլինի:



Նկ. 3. Յեզիրական աստված—սրբազն Ապալիս յեզը: Իսկ սրա մասին (նկ. 3) հավանական ե, վոր գուք իսկի չմտածելիք ել, թե աստված ե: Յեզ ե և ուրիշ վոչինչ: Բայց նույն յեզիրական նրան ընդունում ելին աստծու տեղ, պահում ելին տաճարի մեջ, խնամում, յերկրպագում ելին նրան ու նրանից յերշանկություն խնդրում: Յերբ այդ յեզը սատկում եր, յեզիրական նրան ամառ լալիս ու տրամում ելին այնքան ժամանակ, մինչև վոր գանելին մի ուրիշը, իսկ և իսկ նրա նմանը:

Յեղիպտացիները աստծու տեղ ելին ընդունում նաև կատուներին, կոկորդիլոսներին և ուրիշ կենդանիներին:

Ահա և մի նեզը՝ ինչ վոր կոճղի յե յերկըրպագում. խնդրում է նրան վորսի ժամանակ ողնել իրեն. Նեզը կարծում է, թե աստված մտել է այդ կոճղի մեջ ու նստել այստեղ:



Նկ. 4. Քրիստոնեական աստված:

Ահա մի ուրիշ նեզը վուվել է մի ահազին ձառի տակ ու նույնպես ինչ-վոր բան է խընդ-

րում. Ո՞ւմից ե խնդրում: Հենց այդ ձառից: Յեկ մտքով ել չի անցնի, թե ձառը կարող է աստված լինել:

Իսկ նեզը երի մեջ հենց այդպես ել է: Նըրանց մոտ բումնում են հսկայական ձառեր և այդ ձառերը համարվում են սրբազն ու նեզը երը նրանց աստվածների տեղ են ընդունում:

Ահա ելի մի ուրիշը: Այդ հո բոլորովին մարդու յե նման: Թուրքի պես վուվերը տակը ծալած նստած է: Հնդիկներն (Ասիայի ժողովուրդ) այդ աստծուն հավատում են: Կարծում են, վոր մի ժամանակ նա յերկնքից ընկել է գետին, վորպես զի մարդկանց ազատի տառապանքներից ու հետո ելի գնացել է յերկինք:

Այժմ միլիոնափոր մարդիկ հավատում են այդ աստծուն:

Բայց մի՞թե կարելի յե բոլորին համարել: Մարդիկ այնքան շատ աստվածներ են հսարել, վոր հաշվել չես կարող: Մանավանդ վայրենի ժողովուրդները: Քանի ցեղ կա, այնքան ել նոր աստված: Մեկն ոծին է յերկրապատում, մլուսը՝ կոկորդիլոսին, յերրորդը՝ թոչուններին, չորրորդն՝ ելի մի ուրիշ կենդանու և այն:

Ահա հարկավոր է մի աստծու յել նայել (տես նկ. 4): Այդ ել իսկական մարդ է: Թե՛ ձեռքերը, թե՛ վուվերը, թե՛ յերեսը—բոլորը տեղն

ու տեղը: Յեվ սարսափելի չե: Ու դեռ մորուք
ել ունի—մեծ ու սպիտակ: Կողքին նստած ե մի
ուրիշ մարդ, ավելի յերիտասարդ: Իսկ նրանց
յերկուսի գլխավերեր աղավնին ե թռչում:

Հավանական ե, դուք արդեն հասկացաք թե
այդ աստծուն ով ե աղոթում: Այդ աստվածը
կոչվում ե քրիստոնեական աստված ու նրան
ուստի ել են հավատում:

Չկարծեք, թե դրանք յերեք աստվածներ են
(նկարված ե յերկու մարդ և աղավնի): Դրանք
հաշվում են մի աստված, միայն թե հավատա-
ցյալների մեջ նա ինչ-վոր յերեք մասի յե բա-
ժանվում և նրանք ասում են՝ «աստված մեկ ե,
բայց յերեք պատկերով—հայր աստված, վորդի
աստված և հոգին սուրբ աստված»:

Ինչ-վոր հրաշալի նենսգամտություն ե:

Ասում են, վոր այդ աստվածն աներևուցի-
ե, վոր նա գտնվում է ամեն տեղ, վոր նա ամե-
նազոր ե, այսինքն՝ կարող ե անել այն ամենը,
ինչ կամենա: Ի պատիվ այդ աստծուն մեծ տա-
ճարներ (յեկեղեցիներ) են շինում և այնտեղ
աղոթում նրան ու ամեն բարիք խնդրում:

Իսկ բոլոր այդ աստվածներից վորն ե ճշշ-
մարիտ, իսկական աստված: Իսկ կարող ե պա-
տահել, վոր նրանք բոլորն ել ճշմարիտ լինեն:
Կամ բոլորն են անձմարիտ:

Եյդ բոլորի մասին ե, վոր խոսելու յենք շա-
րունակության մեջ:

Խնդիր.—Հեշտցեք, թե դուք ելի ինչ աստված-
ների մասին եք լսել: Նկարագրե-
ցեք նրանց:

II

ԱՅԴ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ԶԵՆ ՅԵՂԵԼ ՅԵՎ ԶԿԱՆ:

Հավանական ե, դուք արդեն գիտեք, վոր
մարդիկ միշտ այնպես չեն ապրել ինչպես այժմ:
Լսել կամ գուցե կարգացել եք, վոր այն ամենը,
ինչ վոր կա, մարդիկ մի ժամանակ մի անգամից
չեն շինել ու այնպես ել մինչև որս մնացել ե:
Բոլոր այդ այերբուղանները, շոգեշարժները, հակա-
չական տները, յեկեղեցիները և այն առաջվա-
մարդիկ չեն շինել, այլ նորերս են հնարել ու
կառուցել, իսկ առաջ, շատ վաղ ժամանակները
նույնիսկ չեն յեղել խրճիթներ ու սալեր: Հա-
վանական ե, գիտեք և այն, թե այն մարդկանց,
վորոնք ապրում ելին առանց տների ու առանց
կրակի ու շարժվում ելին միմիայն իրենց վոաքե-
րի վրա, այժմ կոչում են նախադարյան մարդիկ:

Իսկ նախադարյան մարդկանց մասին ով վոր

բոլորովին վոչինչ չգիտե, ապա թող այժմ ուշադրությամբ կարդա:

Նախադարյան նախադարյան մարդիկ ապրում մարդիկ ինչպես ելին փոքրիկ խմբերով (40—50 ելին ապրում: մարդ), առանց վորեե պետերի, թագավորների, կամ իշխանների—ամեն մարդ իր տերն եր: Ապրում ելին կամ վորեե քարայրում, կամ թռչունների պես ծառերի վրա: Զկար վոչ կրակ և վոչ ել վորեե հագուստ:—Կենդանիների պես մերկ ելին ման դալիս, մարմնի վրա աճել ելին մազեր:

Ակզբում նախադարյան մարդիկ խոսել չըգիտելին, այլ այնպես, ինչ-վոր ձախներ ելին հանում—վոչ բառաչ, վոչ ել ոռնոց:

Ամբողջ որը, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, նրանք վազվզում ելին անտառում կերակուր վորոնելու համար և քիչ չեր պատահում, վոր դատարկ փորով բարձրանալին իրենց ծառը, կամ մանելին քարայրը քնելու:

Կարելի ե ասել, վոր նախադարյան մարդկանց այդ փոքրիկ խումբը կենդանիների հոտից դրեթե չեր տարբերվում:

Յեվ այդ մարդիկ վորեե կապիկից շատ բարձր չելին իրենց հասկացողությամբ:

Այդ ժամանակ Այդ նախադարյան մարդիկ աստված չկար: արդյոք վորեե աստծու հավատում ելին: Իհարկե վոչ: Մտածել այդ—միենուին ե,

թե մտածել, վոր իբր գայլը, կամ կապիկը աստծուն հավատում են:

Այն ժամանակ դեռ չելին հասկանում, վոր կարելի յե քարով ընկուզ կոտրել, վոր ատամներով դժվար ե, ել ուր մնաց աստծու մասին մտածել կարողանալին:

Մարդկանց Մակայն նախադարյան մարդկանց կյանքը փոխ-կյանքն աստիճանաբար ու շատ վում եր: դանդաղ փոխվեց:

Սկզբում նրանց գտան, թե ինչպես կարելի քարից ոգավել, նրանով կարելի ե յե նույնիսկ ծառից պտուղներ վայր զցել, յեթե ձեռքդնրանց չհանի, կարելի ե ընկուզ կոտրել, վոր չես կարող կոտրել ատամներով և թռչունի կամ դաշնի խփել:

Ստացվեց մի շատ կարեսը գործիք: Հետո մարդիկ հասկացան, վոր փայտն ել ոգակար բան ե, հողից ուտելու արմատներն ավելի լավ ե փայտով հանել, քան ձեռքերով:

Սկսեցին նրանով ել ոգավել: Այդ ժամանակականից մարդիկ սկսում են արագ կերպով հեռանալ կենդանիներից, վորոնցից նրանք համարյա թե չելին տարբերվում: Ծուռով նրանք ունենում են ավելի լավ գործիքներ—կացինը և մուրճը, քարը փայտին կապելը հասկացել ելին:

Ի՞նչ ասել կուզե, վոր կերակուր ճարելն
այդ գործիքներով ավելի հեշտ եր, շան մենակ
ձեռքերով ու ատամներով:

Այդ ժամանակներում մարդկանց լեզուն ել
կամաց-կամաց զարգանում է, սկսում ե խոսել:
Նրանք արդեն շատ ավելի լավ են հասկանում,
քան առաջ: Այժմ նրանց կենդանիների հետ չի
կարելի համեմատել:

Բայց համենայն դեպս այն ժամանակ մար-
դիկ դեռ շատ քիչ բան ելին հասկանում նրանից,
ինչ վոր կատարվում եր իրանց շուրջը: Յեկ
այնպիսի յերևույթներ, ինչպես հիվանդությունը,
քունը, մահը նրանց համար նույնպես անհասկա-
նալի ելին:

Մանավանդ մահը: Նրանք նույնիսկ կար-
ծում ելին, թե մարդիկ բոլորովին չեն մեռնում:

Անա այդ ինչի շնորհիվ եր առաջ դալիս:
Հիվանդների հետ կերակուր վորոնելու համար
պատահած դեպ- նախադարյան մարդիկ ստիպված
են: Ելին լինում մեկ տեղից մյուսն

անցնել: Պատահում եր, վոր նրանցից մեկն ու
մեկը լուրջ հիվանդանում եր կամ վիրավորվում:
Հիվանդը չի կարող քայլել, իսկ փոխադրելու այլ
միջոց այն ժամանակ դեռ չկար: Ի՞նչ անել: Շա-
լակով տանել, վոչ վոք չի ցանկանում: Այդպիսի
բեռով թե ուտելիք չես ճարի և թե յուրաքիննե-

րիցդ հետ կմնաս: Դրա համար զցում ելին ու
իրենք առաջ անցնում: Այդպիսի հիվանդներին
յերբեմն կերակուր թողնում ելին, իսկ հաճախ
վոչ: Դեհ այն ժամանակ այլ կերպ չեր կարող
լինել: Ամբողջ ժամանակը գնում եր նրա վրա,
վորպեսզի իրենց համար մի կերպ ուտելիք ճա-
րեն, — ել ուր մնաց ուրիշի մասին մտածեն:

Յեկ ահա պատահում եր վոր մի քանի որից
հետո նրան, վորին թողել ելին անշարժ պառ-
կած, համարյա մեռած, հանդիպում են միանգա-
մայն առողջ, ինչպես և առաջ:

Կամ թե ուշագնաց մարդուն զցում ելին մի
վորեւ տեղ: Իսկ հետո յետ ելին դառնում ու
տեսնում, վոր նա իրեն համար նստած է, ասես
թե վոշինչ պատահած չինի:

Այդպիսի դեպքեր շատ ելին լինում: Յեկ
նախադարյան մարդը վճռեց, վոր իրանցից ամեն
մեկը, ով վոր ահա այդպես ե լինում — անշարժ
հիվանդ կամ վիրավոր կամ ուշագնաց պառ-
ում ե, — մի առ ժամանակ հետո անշուշտ վեր
կենա, ելի կսկսի ապրել:

Ին յեկ յերազ: Բայց չե վոր մարդիկ մեռնում ե-
նն: Իսկ վայրենիները շարունակում ելին մտա-
մել, վոր մեռածը այնուամենանիվ ապրում ե:
Դրա պատճառն այն եր, վոր մեկն ու մեկը յե-

րազում տեսնում եր նրանց, ովքեր մեռնում ենին. նրանց հետ խոսում եր, միասին գաղան ենին փորսում:

Թե ինչ բան է յերազը, մարդիկ չգիտեցին: Յեկ յեթե ահա նրանք յերազում այդպիսի բաներ եցին տեսնում, ապա նրանք մտածում ենին, փոր դա իսկապես է յեղել: Իսկ թե այդ ինչպես կարող ել լինել, նրանք իրենք ել չեցին հասկանում:

Ինչ-վոր անհասկանալի մտքեր եր ծագում պլուխներում:

՞ Ե ր ե ր ր: Կամաց-կամաց մարդկանցից սկըսում են ջոկվել պետերը: Դրանք ծերունիներն ենին: Լավ գիտեցին անտառի միջի ճանապարհները, փորտեղից գնում եր վայրենի գաղանը, գիտեցին զանազան գաղանների սովորությունները, կարող ենին և վերքեր բուժել:

Ամբողջ ընտանիքն սկսում են հազանդվել այդպիսի ծերին, լսում են նրան և կատարուան հրամանները, փորովինեան դա ոգտակար եր

Այն ժամանակ մարդկանց գործիքներն են արդեն ավելի լավն ենին. կերակուր ճարեր հեշտացել եր:

Այժմ գեթ մի փոքր ազատ ժամանակ եր մնում:

Մարդու մեջ մե- Յեկ այն բոլորը, ինչ վոր ծագում կը նսած ե: Եր նախադարյան մարդու գըլխում՝ վիրափորվածների, հիվանդների և յերազների մասին, նա կարգի յեկ բերում ու վճռում, թե ինչպես ընտանիքի մեջ մեկը—ավազը, ծերը հրամացում ե, իսկ բոլոր մնացածները նրան հնագանդվում են, ճիշտ այնպես ել իմ մեջ մեկը նստած ե և հրամացում ե, իսկ յես կատարում եմ: «Նա» ցանկանում ե ուտել—յես ուտում եմ: «Նա» ցանկանում ե, փոր յես քար նետեմ, յես այդ անում եմ:

Իսկ յերբ մարդը անշարժ պառկում է (մահուցագնացություն, քուն), ուրեմն նշանակում ե «նա», «մյուսը» նրա միջից դուրս ե յեկել:

Մահն այժմ: Դեռ քիչ առաջ, գուցե և յերեկ, ընտանիքից մեկն ու մեկը թափառում եր անտառում, ուտում եր, խմում եր, շնչում եր, իսկ այժմ հանկարծ բոլորովին անշարժ ընկած ե: Անցնում եր մեկ որ, յերկու որ, մեռելը միշտ միևնույն դրության մեջ եր: Յեկ ով ել վոր լիներ, ամեն մեկի հետ միևնույնն եր լինում—ընկած ե չի շարժվում և չի շնչում:

Այժմ մարդիկ արդեն մտածեցին, փոր «նա», ով նստած եր այդ մարդու մեջ, արդեն չկա, դուրս ե թոել:

Հ ո գ ի: Նախադարյան մարդիկ նկատեցին, վոր կենդանի մարդու մեջ ամենազլավորը ընչառությունն է: Հիվանդները կամ ուշագնացները նույնպես չեն ուտում և չեն խմում ու չեն շարժվում (յեթե շատ հիվանդ են): Բայց նրանք շնչում են: Թեև հազիր նշմարելի, բայց և այնպես շնչում են: Իսկ մեռելը շնչառություն բոլորովին չունի:

Դրա համար ել մարդիկ վճռեցին, թե «նա» ով նստած է մարդու մեջ և հրամայում է նրան, հենց ընչառությունն է, վորի յե, և վոր այդ վորին կենդանի մարդու կրծքում է:

Խնդիր.—Հիշեցեք, յերբ այժմ ասում են՝ «հոգուն չոգեց», «հոգին թռավ նրա միջից»: Հասկացեք, թե վարտեղից են այս արտահայտությունները:

Յերազներ: Յերագներն ել սկսեցին վորիներով բացատրել: Որինակ՝ մարդ յերազում տեսնում եր, վոր նա անտառում շշկվել է, մտել և այնպիսի խորքեր, վոր դուրս գալ չի կարողանում. ծակող թփերը նրա յերեսն ու ձեռքերը պատառտել, արյունիվա են արել: Ու հանկարծ թփերի միջից դուրս ե թռչում մի սարսափելի գազան և ուղղակի նրա վրա՝ արձակվում: Ատամ-

ներով բռնել ե վոտքից և... մարդն արթնանում է:

Տեսնում է, վոր պառկած է նույն տեղում, վորտեղ պառկած եր, ձեռքերն ու վոտքերը վողին, վոչ մի զազան չկա: Կողքին պառկած և քընած է մի ուրիշ մարդ:

Դրա համար ել սկսեցին մտածել, վոր յերբ մարդը քնած է, ապա «վոգին» ժամանակավորապես նրա միջից դուրս ե թռչում ու վորեն տեղ թափառում. իսկ այն բոլորը, ինչ-վոր յերազում տեսնում են, այդ ժամանակ դա «վոգու» հետ է կատարվում:

Դիտորդուն Այն ժամանակ գիտություն չկար: Հկար. Դրա համար ել զրեթե այն բոլորը, ինչ վոր մարդիկ տեսնում ենին, նրանց համար անհասկանալի յեր: Որինակ՝ յերբ կարկուտ եր դալիս, մարդը չգիտեր, թե դա ինչու յէ լինում ու դրա վրա չեր մտածում: Բայց յերբ մի քանի խոշոր կարկուտներ շրխկում ենին նրա զրեխին, նա սկսում եր մտածել՝ թե այդ ով է վերեկց զլիին սառցի կառոներ թափում:

Կամ հիվանդանում եր, կամ սարսափելի փոթորիկ եր լինում, հորդ անձրեւ: Թե ինչից եր առաջ գալիս այդ—մարդիկ չը իտեցին. այդ յերեւություններն իրեն գիտեած են առաջին զգում: Ու

վճռեցին, վոր այդ բոլոր չարիքն անում են հոգիները, վորոնք ինչ վոր բանով դժգոհ են:

Մեզ համար այժմ պարզ և հասկանալի յե, թե ինչու յե անձրե գալիս, ի՞նչից են լինում թու կորուն ու կարկուտը, բժիշկն իմանում ե, թե ինչու յե գլուխը կամ վորը ցալում և դեղ ե տալիս, վորից ցավը դադարում ե:

Գիտությունն այս բոլորին հասել ե, իսկ առաջ—չելին հասկանում, վախենում ելին ու բացատրում վոգիներով:

Ահա թե ինչպես ե նախադարյան մարդկանց մեջ առաջ յեկել վոգիների հավատը:

Այդ մտացածին վոգիներից ել հետագայում ստացվեցին զանազան աստվածներ:

Վոգիների մասին Յերբ մարդիկ սկսեցին հավատալ, պետք ե հոգ տա վոր մեռելի մարմնից վոգին դուրս նել: Ե թռչում, նրանք վճռեցին, վոր այդ վոգու մասին պետք ե հոգ տանել:

Ընդունում ելին, վոր վոգիներն ապրում են, առանց մարմնի յեն ու կարող են ամեն չարիք անել, յեթե նրանք վորեե բանից դժգոհ են:

Այն ժամանակ ինքը մարդն ամենից հաճախ դժգոհ եր այդ դեպքում, յերբ ուզում եր ուտել:

Այս պատճառով ել նա մտածում եր, վոր վոգին ել դժգոհ ե նրա համար, վոր քաղցած ե:

Զե՞ վոր կենդանի մարդն ուտում ե, իսկ մեռածը՝ վոչ: Դուրս ե գալիս, վոր ուտելիքը վոգուն և հարկավոր:

Կարելի յե իհարկե վոգուն չկերակրել, այն ժամանակ նա կմեռնի: Բայց քաղցից նա այնպես կշարանա, վոր մահից առաջ շատ և շատ վատություններ կանի: Ուրեմն ավելի լավ ե հոգ տանել նրա մասին:

Նրա համար ել նույն տեղում, վորտեղ թագում ելին մեռեներին, սկսեցին վոգու համար կերակուր և ջուր դնել:

Յեզ վորովհետեւ վոգին շարունակ ուտել ե ուզում, ապա դուրս եր գալիս, վոր պետք ե հեռեել, վորպեսզի նրա մոտ շարունակ կերակուր լինի:

Վուրմեր: Սկզբում վոգու մասին ինքը, առ վագն եր հոգ տանում:

Բայց յերբ այն փոքրիկ խմբերը, վորոնցով ապրում ելին նախադարյան մարդիկ, սկսեցին աճել (միացան մի մեծ խումբ դարձան), ավագն արդեն ժամանակ չուներ թե այդ բոլորին կառավարել և թե վոգիներով զբաղվել:

Այդ պատճառով ել հոգիների, հոգատարությունն ուրիշ մարդու անցավ:

Նա արդեն ուրիշ վոչինչ չեր անում, միայն

վոգիներին եր ծառակում: Ավելի ուշ այդ մարդկանց սկսեցին բուրը անվանել, իսկ այն կերակուրը, վոր նրանց ելին տալիս՝ զոհ:

Քուրմերին հարգում ելին և նրանցից վախենում: Հավատում ելին, վոր նա կարող է թե լավ և թե վատ բան անել:

ԶԵ վոր վոգիների հետ միշտ գործ ունի: Իսկ քուրմերն ել իհարկե աշխատում ելին այդ հավատն ամուր պահել. յեթե հարգանքն ու յերշկուղը շատ լինի, նշանակում ե շատ կինեն նաև ընծաները:

Ընտանիքի մեջ ավագն ամենազըլ-ավագի վոգին: Խավոր մարդն եր: Բոլորը նրան ելին հնազանդվում, իսկ յերբ միասին ձեռք բերած կերակուրը բաժանում ելին, մեծ մասը նըրան ելին տալիս:

ՅԵ յերբ նա մեռնում եր, այն ժամանակ նրա վոգին ել ամենառուժելն ելին համարում: Բացի դրանից, մտածում ելին, վոր յեթե կենդանի ժամանակ ամբողջ ընտանիքի համար ավագըն յեղել ե ոգտակար մարդ, ապա ուրեմն նրա վոգին ել ոգուտ կրերի: Այդ պատճառով ավագի վոգու համար հատուկ հոգ ելին տանում:

Մնացած բոլոր վոգիներն այնպես ուժեղ չելին համարվում, ինչպես ավագի վոգին: ԶԵ

վոր ընտանիքում բոլորն ել ավագից թուց ելին, նշանակում ե, մտածում ելին մարդիկ, վոր նըրանց վոգիներն ել թուց են: Ոգուտ ել նրանցից ավելի քիչ կա, ու գուցե վոչ մի ոգուտ ել չկա:

Դրա համար ել սկզբներում նրանց մասին կամ բոլորովին չելին հոգում, կամ շատ քիչ ելին հոգում:

ՅԵ նույն իսկ չեր ել կարելի բոլոր վոգիներին կերակրել: Կերակուր ճարելը դեռ շատ դժվար եր, նա կենդանի մարդկանց հազիվ եր բավականացնում:

Ու միայն ավելի ուշ, յերբ մարդիկ սկսեցին լավ ապրել, նրանք սկսեցին հոգ տանել բոլոր վոգիների մասին: Բայց դարձյալ բոլորի համար վոչ նոյն չափով:

Մեռելներին այժմ Մեռելներին կերակրելը դեռ այլ են կերակրում: Ժըմ ել գոյություն ունի:

Ճատ հավատացյալներ, մանավանդ գյուղերում, յերբ վորեե մեկին հիշում են, «քելեխ» (բընձե ճաշ մեղրով) են յեփում: Այդ քելեխը նախորոշվում ե նրա համար, ում հիշում են:

Հաճախ յերբ մեկն ու մեկը մեռնում ե, ազգականները սրբապատկերների տակ 9 որ մի բաժակ ջուր են դնում՝ կարծում են, թե մեռա-

ծի վոգին դեռ 9 որ մնում է տանը ու նախմել ե ուղում:

Մի քանի տեղերում գոյություն ունի այսպիսի սովորություն. «մեծ պասից» մի որ առաջ ընթրիքի համար խմորեղեն են յեփում: Ընթրիքից հետո վերցնում են այնքան խմորեղեն, վորքան ազգական է մեռել, դարսում են քերեղանի մեջ ու դնում վառարանի վրա:

Զատկին հաճախ գնում են գերեզմանասուն ազգականների հետ «քրիստոնեաբար համբուրգելու» և գերեզմանների վրա թողնում են «կարմիր ձվեր»:

Բոլոր այս սովորությունները մնացել են այն ժամանակվանից, յերբ դեռ ապրում ելին նախադարյան մարդիկ, վորոնք իրենց վոգիներին կերակրում ելին:

Խնդիր.—«Մեռելներին կերակրելու» ել ի՞նչ սովորություններ գիտեք:

Այժմ յեկեք քննենք, թե մարդիկ նախնիների վոգիներից ինչպես են անցել այն աստվածներին, վոր մենք քննության առանք հենց ըստկըում:

Վագիներն ինչի նախադարյան մարդիկ կարծում մեջ ասես բնակ- ելին թե մեռածի միջից, դուրս վաւմ են: թռած վոգին, կարող ե բնակիել

վորեւ կենդանու, բույսի ու նույնիսկ առարկացի մեջ:


Հատկապես այդ հարմար եր այն կենդանիների վերաբերմանը, վորոնք կարող ելին դիակ ուտել: Յերբ կենդանին կերավ նրան, վորի մեջ առաջ վոգին եր, ուրեմն վոգին ել մարմնի հետ ներս գնաց:

Բայց ուտելը պարտապիր չեր: Կարծում ելին, վոր վոգին առանց դրան ել կարող ե բնակարանը փոխել:

Յեվ այն կենդանուն կամ ծառը, վորի մեջ իբր թե բնակվել ե վոգին, արդեն սրբազն աստված ելին համարում և յերկրպագում նրան:

Մարդիկ կարծում ելին, վոր իրենք ել կարող են վոգուն բնակեցնել մի վորեւ քարի, փայտի մեջ և ազն, և վոր դրա համար հարկավոր ե միայն փորագրել, կամ քանդակել այդ քարից

Նկ. 5 Յեզիրական աստված հեպպոպոդ դամ զլխով:



կամ փայտից սրբազն կենդանու պատկերը,
հարկավոր ե նկարել նրան (տես նկ. 8):

Յեզ իր համար այդպիսի աստված շինելով
մարդը նրան յերկրպագում եր ու զոհ մատու-

ցանում: Խնդիր.—1. Ի՞նչի՞ հետ կարելի յե համեմատել
սրբապատճերները և ում հետ

այն մարդկանց, վորոնք նը-


րանց աղոթում են:

2. Ի՞նչ կիսավայրենի ժողո-
վուրդներ գեռ այժմ եւ սըր-
բազն կենդանիներ ունեն
և վրոնք են դրանք:

Յերբ հավատը դեպի
աստվածները փոխվել
սկսեց, այն ժամանակ
նրանց սկսեցին ուրիշ
կերպ նկարել—կես կեն-
դանու, կես մարդու ձե-
փով, իսկ ավելի ուշ, բո-
լորովին մարդու նման
(տես նկ. 5 և 6):

Արեվի աստ Յերբ մար-
ված, բամու դիկ սկսեցին
աստված, վո- հողագործու-
րոնի աստված

յեվ այլն թիամբ ըգ-
բազվել, նկատեցին, վոր
նրանց դաշտերը կախում
ունեն արկից. յեթե արե-
գակը ժամանակին կտա-



քացնի, լավ բերք կլինի, իսկ յեթե սկսի այրել,
յերբ հարկավոր չե— ամեն ինչ կորած ե:

Յեզիական աստված կատ- Սկսեցին մտածել, վոր
ալի զիսով արկին նույնպես առան-
ձին վոգի յե կառավարում: Սկսեցին, ի հարկե,
յերկրպագել նրան, զոհեր մատուցանել և լավ
բերք խնդրել:

Յեթե մարդիկ ապրում ելին վորեե կզզու
վրա, նրանք իրանց համար նավակներ ելին շի-
նում ու ծովով լողում գեալի հարևան կղզիները,
վոր փոխանակությամբ վորեե հարկավոր բան ձեռք
բերեն: Նրանց հաջողությունները և անգամ կյանքը
կախված ելին լավ քամուց և խաղաղ ծովից:

Դրա համար ել

քամու աստվածը

և ծովի աստվածը

նրանց աստված-

ները դարձան:

Այդ աստված-

ներին նկարում

ելին զանազան

ձևով: Արեի աս-

տրծուն նկարում

ելին արեի, կամ

կենդանու նման

ու զիսի շուրջն

արեի ճառագալթ-

ներով:



Առուական աստված՝ վորուման յեկ
փորուկի

Վորոտի և կայծակի աստծուն սկսեցին նկարել մարդու նման, կացինն ու կայծակի կապոցը ձեռքին (տես նկար 7):

Քամու աստծուն—թևերով:

Յուրաքանչյուր ցեղ, յուրաքանչյուր ժողովուրդ ուներ յուր աստվածները:


Մարդկանց պատեմ Մարդիկ շատ վաղուց ե, վոր րազմերն ու աստեմ սկսել են իրար հետ պատերազմական ների պատեմ մել: Մի ցեղ ուղղակի կողոպարզմերը: տել եր ցանկանում մյուսին, կամ հարկավոր եր լինում մի բանի համար վրեժիսնդիր լինել: Հաճախ մեկ ցեղ հաղթում ու իրեն եր հնազանդեցնում մի ուրիշն: Պարտվածների պետերին սովորաբար սպանում ելին ու հաղթողը դառնում եր ընդհանուր պետ:

Եռյն բանն ե սկսվում և աստվածների մեջ: Մարդիկ կարծում ելին, վոր յեթե նրանք պատերազմում են, ապա նրանց աստվածներն ել են պատերազմում միմյանց դեմ: Յեվ յեթե մեկ ցեղ հաղթում եր մյուսին, ապա նշանակում ե, թե այդ ցեղի աստվածներն ել հաղթեցին թշնամու աստվածներին:

Յեթե թշնամի ցեղին հնազանդեցնում ելին, ապա կարծում ելին, թե աստվածներն ել հնազանդեցրած են: Յեվ դրանից հետո նոր, մեծ

ցեղը յերկրպագում եր հաղթողների գլխավոր աստծուն:

(Թեև մի քիչ ել պարտվածների աստվածներին ելին հարգում):



Նկ. 8. Փոքրիկ աստվածներ Բարենո կղզում

Թագավորներ աւ- Պետերի առաջնորդների իշ-
խարհում: Խանությունը քանի գնում, ա-
վելի յեր ամրանում: Մանավանդ դրան ոգնում
ելին հաջող պատերազմները:

Այնպես եր լինում, վոր մի ժողովրդի հա-
ջողվում եր հնազանդեցնել իրեն շատ ուրիշ ժո-
ղովուրդներ ու միացնելով, մի մեծ պետություն
կազմել:

Հաղթող առաջնորդի իշխանությունն ուժե-
ղանում եր, անսահման դառնում:

Ի՞նչ ե նշանակում այդ: Այդ նշանակում ե,

վոր նա ինչ ուղեր, կարող եր անել։ Յեթե կամենում եր մեկին մահապատժի յենթարկել—յենթարկում եր, վոչ վոր արգելել չեր կարող։ Մըսքովին անցնում եր մարդկանց կառքին լծել և ըղբունել, անում եր և այդ։

Այժմ նրան անվանում են պարոն, Տեր, քափոր։ Իհարկե, նա և ամենահարուստ մարդն եր։

Թագավորներ յեր- Պետություն կազմած մարդկենում։ Կանց աստվածներն ինչ դրության մեջ են։ Ինչ ասել կուզի այնպես, վոր մարդիկ սկսում են յերկինքը վերակառուցել իրենց յերկրացին ձևերով։

Այստեղ ել ջոկում են մի ասոված, վորն ինչ ուզի կարող ե անել, այսինքն նրա իշխանությունը նույնպես անսահման են դարձնում։

Նրան ել են սկսում քագավոր (միայն յերկնային), իշխան, տեր (այսինքն՝ պարոն) անվանել։

Իսկ և իսկ յերկրացին թագավորի անուններով։

Հարուսեներ յեվ Պետության մեջ հարուստ մարդադասներ։ Պը մենակ թագավորը չեր։ Հասրուկներ։ բուստ ելին նույնպես և նրա բուրոր մերձավորներն ու առևտրականները։ Յեվ նր-

բանք, վորոնք արդեն փող ունեցին, որորի վրա հարստանում ելին։

Իսկ աղքատները, հասարակ մարդիկ ճիշտ հակառակը—շատ վատ ելին ապրում և քանի գընում, այնքան ավելի վատանում եր նրանց վիճակը։ Առանձնապես վատ եր ստրուկների վիճակը։ Դրանք պարտիված յերկրների մարդիկ ելին։ Թագավորի մերձավորներն ու հայտնի հոգատերերը նրանց վերցնում ելին իրենց մոտ և ստիպում ելին նրանց աշխատել իրենց համար։ Ստրուկին մարդու տեղ ել չելին դնում—այնպես, ինչ-վոր կիսակենդանի։ Տերը անորինում եր նրա կյանքը այնպես, ինչպես ցանկանում եր։


Մշտական ծեծ, մահապատիժներ, ծաղր ու ծանակ, կարիք, քաղց—ահա թե ինչ եր վիճակված տանել ստրուկներին, աշխատավորներին ու աղքատներին։

«Փրչի» հավաքը։ Բայց բոլոր այդ դժբախտներն անկազմակերպ ելին, բաժան-բաժան և պարզ ե, վոր իրանց տանջողներին վոչինչ անել չելին կարող։

Նրանք միայն մտածում ելին և հույս դնում թե այդպիսի կյանքը վերջ ի վերջո վախճան կունենա, թե կդա մեկը և նրանց կազատի տառապանքներից։

Յերևան են գալիս գուշակողներ (մարգարեներ), վորոնք ասում են, թե շուտով կդա մի հատուկ եակ—կիսով չափ աստված, կիսով չափ մարդ (աստվածամարդ) և կփրկի մարդկանց։

Բուդյա Այժմ ել հսկիկները (Ասիայի մի ժողովուրդ) պատմում են, վոր նրանց մեջ, իբր թե, շատ առաջներն այդպիսի աստվածամարդ է յեկած յեղել: Ասում են, վոր նա ծնվել է կուլս Մայիսից: Նրա անունն եր Բուդյա:



Նկար 9. Հնդկական ռմայրասվածածին» Մարիամ կերակրում և իր վօրդի Բուդյային:

Իբր թե սատանան անապատում նրան վորձել է, բայց դրանից բան դուրս չե յեկել՝ նա գայթակղության չի յենթարկվել: Ասում են, վոր Բուդյան հրաշքներ եր կատարում, հիվանդների միջից վոնդում եր դեկրին, մի խոսքով բժշկում

եր: Խոկ յերբ վոր մեռավ—թռավ (համբարձավ) յերկինք:

Այժմ Ասիայում միլիոնավոր մարդիկ հավատում են Բուդյային:

Կոնֆուցիոն: Չինացոց մեջ ել իբր թե նույն պես մի ժամանակ յերեան է յեկել Բուդյայի պես աստված—փրկիչ: Նրա անունն ե Կոնֆուցիոն (տես նկար 10):

Ասում են, վոր դա յել կույսից և ծնվել: Սատանան նրան ել և փորձել: Իբր թե Կոնֆուցիոնն ել հրաշքներ ե կատարել ու մահից հետոնույնպես համբարձել յերկինք:

Բուդյայի և Կոնֆուցիոնի պատմությունները շատ վաղուց զոյտություն ունին—յերկու և կես Նկար. 10 Չինական «փրկազար տարի»: Կիչ» Կոնֆուցիոն:

Դրանց նման աստվածներ ուրիշ շատ ժողովուրդների մեջ ել կան:

Հիսուս Քրիստոս: Այդպիսի աստված ոռումներն ել ունեն. դա Հիսուս Քրիստոսն է: Նա յել նույնպես իբր թե յեկել և մարդկանց տառապանքներից փրկելու: Ասում են, վոր նա ծնվել է սրանից 1926 տարի առաջ (այսինքն՝ Բուդյայից և Կոնֆուցիոնից 600 տարի հետո):



Իբր թե նույնպես ծնվել ե կույս Մարիամից:

Խնդիր.—Համեմատիր «Մայա» և «Մարիամ» բառերը:

Նրան ել ե սատանան փորձել: Հիսուսն ել, Բուգդայի և Կոնֆուցիոսի պես հրաշքներ ե գործել, բժշկել ե հիվանդների, բորոտների, արտաքսել ե գեերին: Յեվ մեռնելուց հետո յել համբարձել ե յերկինք:

Բոլոր աստվածներ- Ի՞նչ դուրս յեկավ այն բոլոր րին մարդիկ են աստվածներից, վորոնց մասին հնարել: մենք խոսեցինք:

Այն, վոր իրականում այդ աստվածներից և վոչ մեկը չի յեղել—վոչ նախնիների վոգիները, վորոնց հավատում ելին նախադարյան մարդիկ, վոչ աստված-կենդանիները, վոչ ել աստված-բույսերը, վորոնց ավելի ուշ սկսեցին հավատալ, վոչ արեի, վոչ ծովի աստվածները, այդ բոլորը չի յեղել:

Ճիշտ այդպես ել չեն յեղել (և չկան) այն ամենազոր «յերկնային թագավորները», վորոնց ել ավելի ուշ սկսեցին յերկրպագել և վորոնց շատերը գեռ այժմ ել աղոթում են:

Բոլոր աստվածներին, ինչպես տեսանք, ուղղակի հենց մարդիկ իրենք են հնարել:

Միշտ «յերկնային թագավորությունը» մարդիկ իրենք են կառուցել իրենց յերկրայինի ձեռփով:

III

ԶԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԸ

Տերեւերն Բայց տերաերներն այժմ առածծու մասին, սում են. «Ճիշտ ե, բոլոր մըուս աստվածները չեն յեղել: Իսկ մեր աստվածը յեղել ե: Միշտ յեղել ե և միշտ ել կիխի: Նա ստեղծել ե և ամբողջ աշխարհը—արեգակը, յերկիրը, լուսինը, ասաղերը, բույսերը, կենդանիներին և մարդուն: Յեվ գեռ այժմ ել կառավարում ե ամբողջ աշխարհը: Յեթե աստված չլիներ—այս բուրը վճրտեղ պետք ե լիներ»:

Ուրեմն յեկեք այժմ մի քիչ ավելի լավ քրնենք այդ «արարչին» և տեսնենք, արդյոք ամբողջ աշխարհն ու մարդուն նաև յես ստեղծել, թե ամեն ինչ առանց նրան ե յեղել:

Տերեւերն աւ- Աշխարհի «ստեղծագործու- խարի ստեղծա- թիւն» մասին ահա թե ինչ ե գործուրյան մա- գրվում տերաերների «սրբազն» սին,
գրքերում:

«Սկզբում չկար վոչ յերկինք, վոչ յերկիր: Խավար եր և աստծու հոգին սավառնում եր ան-

հունության մեջ։ Հետո աստված ասաց. «Թող
լինի լուս»։ Յեվ յեղավ լուս։ Այդ առաջին որն եր։

Յերկրորդ որն աստված ստեղծեց յերկինք
ու յերկիրը։ Յերրորդ որն աստված մի տեղ հա-
վաքեց բոլոր ջրերը, վորոնք գանվում ելին յեկ-
րի վրա և յերեան յեկան զետերը, լճերը և ծո-
վերը, իսկ յերկրի վրա՝ բույսերը և ամեն տե-
սակի ծառերը։

Չորրորդ որն աստված ստեղծեց արեր, լու-
սինն ու աստղերը։

Հինգերորդ որը—ձկներին ու ամեն տեսակ
թռչուններին։

Վեցերորդ որը—բոլոր կենդանիներին ու
մարդուն։

Յոթներորդ որն աստված դադարեց ստեղ-
ծելուց ու գործից հանգստանում եր։

Լավ ե դուրս գալիս։ Աստված մենակ իր
համար թռչում եր. բացի նրանից, վոչ-վոք և վո-
չինչ չկար։ Յերեսում ե, ձանձրացավ։ Յեկ, մտա-
ծում ե, ստեղծեմ աշխարհն ու մարդուն։ Ու
վեց որից հետո բոլորը պատրաստ ե։ Ճիշտ ե,
մի քիչ հոգնեց՝ յեռթներորդ որը արդար աշխա-
տանքներից հետո հարկ յեղավ հանգստանալու։

Տերտերները նույնիսկ ճիշտ ե ճիշտ գի-
տեն, թե քանի տարի սրանից առաջ ե այդ տեղի

ունեցել։ Նրանք հաշվում են, թե աշխարհի «ստեղ-
ծագործությունից» մինչեւ այն ժամանակ, յերբ
իբր թե ծնվեց Հիսուս Քրիստոսը, անցել է
5408 տարի, և Հիսուս Քրիստոսի ծնված որից
մինչեւ այսոր հաշվում է 1926 տարի։

Ուրեմն նրանց ասելով դուրս ե գալիս, վոր
աշխարհը գոյություն ունի ընդամենը 7432 տարի։

Գիտորյունն այլ Բայց այն մասին, թե ինչպես
բան և ապա գոյացավ աշխարհը և վորտեղից
ցուցում. առաջացավ մարդը, գիտությունը
բոլորովին այսպես չի ասում։

Գիտությունն ապացուցում ե, վոր այն որից,
յերբ սկսեցին գոյանալ արեր, յերկիրը և այլ
մոլորակներ, անցել ե վոչ թե $7\frac{1}{2}$ հազար, այլ
միլիոնավոր տարիներ։ Յեվ վոչ թե մի որում
նրանք այնպես դարձան, ինչպես մենք այժմ
տեսնում ենք, այլ անընդհատ, շատ զանդազ
փոփոխվելով։

Մարդիկ ել յերկրի վրա մի անգամից չերե-
փացին։ Շատ յերկար ժամանակ նրանք գոյու-
թյուն չունեցին։ Յեվ նրանից հետո, յերբ արդեն
գոյություն ունեցին և բույսերը և կենդանինե-
րը—կապիկների մի առանձին ցեղից առաջ յեկան
մարդիկ։

Տերտերների ասելով, առաջին մարդն իր
կնոշ հետ զրոնում եր ճոխ այգում (գրախտում),

կերակրվում եր պտուղներով, զվարճանում եր կենդանիներով ու զրոցում աստծու հետ և մեկ ել յերգ եր յերգում: Ուրիշ անելու բան ել չկար:

Իսկ դուք արդեն զիտեք, թե նախադարյան մարդիկ իրաք ինչպես են ապրել. վայրի գազան-ների հետ մշտական կոփվ մղելով քաղցած և սկզբում խոսել բոլորովին չեն կարողացել:

Դուքս ե գալիս, վոր աշխարհի և մարդու ստեղծագործության մասին տերտերների բոլոր այդ պատմությունները միայն հերիաթներ են:

Յեկ այժմ, ինչ ել վոր աստծու մասին տերտերներն են ասում, յերբ լավ քննում ես, սուտ ե դուքս գալիս:

Ի՞նչպես ե Նրանց ասելով ահա թե ինչպես ե՝ Աստված, աստված, նա ամեն տեղ յեղող, ան-չերեռույթ, ամենակարող, ամենագետ, ամենա-բարի, ամենազթառատ և ամենաարդար վոգի յե:

Այս նշանակում ե, վոր չկա այնպիսի մի տեղ, ուր չիներ աստված, վոր նա ամեն ինչ առաջուց գիտե, ամեն բան, ինչ կամենա, կա-րող ե անել, վոր նա բոլորովին սիրում ե, ա-նում ե միայն լավը և ճշմարիտը:

Ի՞նչ արեց Յեկ այդպիսի լավ աստվածը մի այդ Աստվածը, մի ժամանակ ինչ ե արել: Իբրթե ստեղծել ե Ագամին ու Յեփալին (առաջին մար-

դիկը ասում են տերտերները). իսկ այդ մարդիկ մեղանչեցին, նրանք չլսեցին՝ կերան այն ծառի խնձորը, վոր նա արգելել եր:

Իսկ բացի աստծուց, ով ե հանցավոր նրա-նում, վոր Ագամն ու Յեփան մեղանչեցին: Ինչու յեր այսպիսի մարդիկ ստեղծել: Չե՞ վոր ասում են, նա ամենագետ ե, ուրեմն, վաղորոք զիտեր, թե այդ մարդիկ ինչ պետք ե անեն:

Յեկ հետո իբր թե այդ հանցանքի համար, վորի մեջ հենց ինքն ե հանցավոր, այն բոլոր մարդկանց, վորոնք պետք ե ծնվելին Աղամից ու Յեփալից, աստված անիծեց բոլորը պետք ե տառապելին ու տանջելին: Այս բոլորից հետո ել ինչ ամենաարդար ե նա: Միթե այս արդա-րացի յե:

Իսկ հետո իբր թե ել ավելի լավ բան ե արել: Յերբ արգեն մարդիկ շատացան, նրանք ստեղծուն դուք չեկան վատացան, շատ մեղան-չեցին ու նրա մասին մոռացան:

Ապա նա, ասում են տերտերները, համաշ-խարհալին ջրհեղեղ սարքեց, բոլորին խեղդեց: Միայն նոյի ընտանիքը թողեց և մի-մի դուկ ել բոլոր կենդանիներից, վորպես զի նորից կա-րողանալին բազմանալ:

Ինչու աստված այնպես չի արել, վոր մար-

գիկ չմեղանչեցին և նրա մասին չմոռանալին,
հայտնի չեւ Բայց անել կարող եր, քանի վոր,
ասում են, թե նա ամենակարող եւ:

Թե աշխարհի «ստեղծագործության» թե
Ադամի ու Յեփայի, թե ջրհեղեղի մասին պատ-
մվում եւ տերտերների «սուրբ» դրբի մեջ: Յեփ
հենց այդ «գրվածքից» ել դուրս եւ գալիս, վոր
աստված չկա: Յեթե նա լիներ, ապա չեր անի
բոլոր այն գարշելի բաները, վոր նրա մասին
տերտերները հենց իրենք են գրել: Յեփ գեռ ա-
սում ել են, թե «սուրբ գիրքը» գրել են սուրբ
մարդիկ, իսկ աստված նրանց, այսպես ասած,
թելագրել եւ:

Այժմ ի՞նչ ե Իսկ այժմ ի՞նչ ե կատարվում աշ-
կատարվում, խարհում: Ասում են կա աստված
ամենագթառատ և ամենակարող: Իսկ այն ժա-
մանակ ել ինչու յեն ծնվում կուցեր, կաղեր,
ապուշներ ու խելագարներ: Յեթե լիներ այդ-
պիսի աստված, այդ դժբախաները չելին լինի:

Ասում են, աստված կա—ամենաարդար, այ-
սինքն՝ այնպիսին, վոր միայն արդարացի բան է
անում: Ապա ուր եւ այստեղ արդարությունը,
յերբ գրեթե ամբողջ աշխարհում միլիոնավոր
բանվորներ և աշխատավորներ ջաղցից են մեռ-
նում, իսկ նրանց վղին նատած եւ հարուստների

մի խումբ ու ճարպից տրաքվում եւ Յեթե այդ
աստվածը լիներ, նա այդ թուց չեր տա:

Ասում են, աստված կա—ամենակարող,
այսինքն, վորն ինչ կամենա, կարող եւ անել:
Իսկ ինչու նա այնպես չի անում, վոր չլինի
յերկրաշարժեր, փոթորիկ և մրրիկ, արյունահեղ
պատերազմներ, հիվանդություններ, սով համա-
ձարակ և աղն և աղն:

Դեռ ասում ել են, թե մարդկանց մեղքերի
համար բոլոր այդ պատուհաններն աստված ե
ուղարկում: Ուրեմն ինչու յեւ այնպես անում,
վոր մարդիկ «մեղանչում» են: Զե՞ վոր բոլորը,
իբր թե, «Նրա կամքով» եւ կատարվում, ուրեմն
նրա կամքովն ել մեղանչում են:

Յեփ վորտեղ եւ գտնվում այդ աստվածը:
Ինչու նրան վոչ-վոք չի տեսնում: Տերտերներն
ասում են, վոր աստված ամեն տեղ եւ, բայց
անյերեւուցիթ եւ: Լավ եւ զլուխ ազատել նրանով,
թե նա անյերեւուցիթ եւ, միայն դրան չի կարելի
հավատալ:

Խնդիր.—Հյուրասիրիր ընկերոջդ «անյերե-
վույթ» խնձորներով:

Դրա համար նա քեզ ի՞նչ կասի:
Այդ աս-
Դուրս եւ զալիս, վոր քրիստոնեա-
վածը չկա: Կան այդ աստվածն ել չկա: Նրան
եւ, ինչպես և մնացած բոլոր աստվածներին մար-

դիկ իլենք են հսարել: Յեվ շատ վաս են հսարել,
նրա մասին այնպիսի բան են ասում, վորապիսին
նա յերբեք չպետք է աներ:

Խնդիր.—Արդյոք կարող է աստված, վորի
մասին պատմում են տերտերները,
ինքն իրեն սպանի:

Արդյոք կարող է նա շինել այնպի-
սի մի քար, վորն ինքը չկարողա-
նա վերցնել:

IV

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵԼ ԶԵՂԵԼ

Այն աստված, վորի մասին մենք հենց նոր
խոսեցինք, կոչվում է նույնպես քրիստոնեական
աստված: Նա այգակես և կոչվում այն պատճա-
ռով, վոր նրան հավատացող մարդիկ հավատում
են և Հիսուս Քրիստոսին: Նրանց կարծիքով
աստված մեկ է, բայց յերեք պատկերով—Հայր
աստված, վորդի աստված և հոգի աստված:
Վորդի աստված հենց այդ Հիսուս Քրիստոսն է:
Նա յել հավիտենական և համարվում (միշտ յե-
ղել է և միշտ ել կլինի), նույնպես ամենակա-
րող է և անյերեսութ:

Բայց նա իբր թե 1926 տարի սրանից ա-
ռաջ յերեացող մարդ դարձավ և ապրեց աշխար-
հում, յեկել եր մարդկանց տառապանքներից ա-

զատելու: Ապա յեկեք քննենք, իրոք Հիսուս
Քրիստոս յեղել է:

Պատմություն: Այժմ մենք գիտենք, թե ինչ եր
կատարվում է ով եր ապրում սրանից 2000,
3000 և ել ավելի տարիներ առաջ: Այդ իմանա-
լու համար գիտությունը միջոցներ շատ ունի:
Անա վորն է այդ միջոցներից մեկը՝ ուսումնա-
սիրել այն զիրքը, վոր պահված են այն ժամա-
նակվանից: Միքանի այդպիսի գրքերում նկարա-
գրվում է; թե վոր թագավորը յերբ է ապրել,
քանի տարի յե նա թագավոր յեղել, նրանից հե-
տո ով է թագավորել ևալն: Այդպիսի գրքերը
կոչվում են պատճության գրքեր: Պատճություն-
ներ առաջ ամենից շատ թագավորների մասին
ելին գրում, բայց աշխատում ելին հեշտությամբ
գրել այն, ինչ վոր յեղել եր: Ինչպես եր թա-
գավորի անունը, ում հետ եր նա պատերազմել
և նրա թագավորության ժամանակ ել ինչ է յե-
ղել:

Ամճշտությունը միայն նրանումն է, վոր
միշտ թագավորներին նկարագրում ելին իբրև
լավ մարդ, և վոր նա իբր ժողովրդի համար ա-
մեն լավ բան արել է:

Հիսուսի մասին Այժմ կան պատճություններ, վո-
պատմություննե-
րոնք գրված են թե այն ժամա-
նի մեջ գրված չե: Նակ, յերբ Հիսուսը ծնվեց և թե

ուշ: Յեվ այդ գրքերից վոչ մեկում Հիսուսի մասին վոչինչ չի ասված: Թագավորները, պատերազմները, որենքները—բոլորը, ինչպես կարգնե, նկարագրված են, իսկ Հիսուսի մասին վոչինչ չկա:

Քրիստոսի մասին միայն գրված եւ տերտերների «սուրբ գիրք» ավետարանների մեջ:

Ավետարաններ: Ավետարաններ Հիսուս Քրիստոսի մասին յեղած գրքերն են, վոր իբր թե գրել են նրա աշակերտները—Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը և Հովհաննեսը: Այժմ տերտերներն յեկեղեցում այդ գրքերից որական մի քիչ կարդում են:

Յերբ գիտնականներն սկսեցին ուսումնասիրել և քննել այդ ավետարանները և հասկանալ, թե վճրտեղ և յերբ են նրանք յերեան յեկել, առա պարզվեց, վոր նրանք գրված են վոչ թե Հիսուսի վորեւ աշակերտի, այլ իրենց տերտերների: Յեվ նրանք վոչ թե չորս մարդու ձեռքով են գրված, այլ շատ մարդկանց. մեկը գրել ե մի վորեւ ավետարան, իսկ մյուսը, արտագրել ե յերբ վորեւ բան չի կարողացել կարգալ, իր ձեռով ե գրել: Կամ թե մի վորեւ տեղ նրան ուղղակի կարող եր դուր չգալ ուստի և փոփոխել ե իր ցանկացածի պես:

Հետեւալ արտագրողն ելի մի վորեւ բան փոփոխել ե ևալին:

Նույն ե յեղել և մյուս ավետարանների հետ: Յեվ վերջ ի վերջո այնպիսի շիլա-վլավ ե սուացվել, վոր վոչինչ չես կարող հասկանալ:



Չորս ավետարանից յուրաքանչյուրի մեջ Քրիստոսի մասին ե պատմվում և վոչ մեկը մյուսին չի բռնում: Բոլորի մեջ ել տարբեր ձեռվ ե:

Ամենաառաջին ավետարանը հնարիքած ու գրիքած է 150 տարի նրանից հետո, յերբ իբր թե Քրիստոս ծնվել է:

Քրիստոփ ծնուն. Ահա թե ինչպես եւ պատմվում դր ըս Մատք. Հիսուս Քրիստոսի ծնունդը Մատոսի: թեոսի Ավետարանում:

Հրեաստանում (այն ժամանակ հրեական թագավորության), Բեթղեհեմ քաղաքում Մարիամից ծնվեց Հիսուսը: Այդ ժամանակ յերկրնքում յերեսում է մի հատուկ աստղ: Իմաստունները (մողերը) տեսնում են այդ աստղը և նրանով իմանում, զոր Հիսուս ծնվել է: Նրանք գնում են Յերուսաղեմ (Հրեաստանի պիխավոր քաղաքը) և հարցնում «Ո՞ւր ե հրեցից ծնված թագավորը» Հրեաստանի թագավորն այն ժամանակ Հերովդեսն եր: Նա վախեցավ, թե ուրիշ թագավոր ե ծնվել և մտածեց սպանել Հիսուսին: Այս պատճառով նա իր մոտ կանչեց մողերին, հրամակեց նրանց Հիսուսի մասին ամեն բան իմանան և դան պատմեն իրեն: Մոգերը գնացին Բեթղեհեմ, այնտեղ գտան Հիսուսին, յերկրպագեցին նրան (տես նկար 11) և գնացին տուն: Ուզեցին գնալ Հերովդեսի մոտ, բայց յերազում հրեշտակը յերեաց նրանց և հրամացեց ուրիշ ճանապարհով գնալ: Հետո հրեշտակը (նույնպես յերա-

զում յերեաց Հովսեփին (Մարիամի մարդուն) և հրամացեց նրան Հիսուսին փախցնել Յեղիպտոս, վորովհետեւ Հերովդեսն ուզում է նրան ըսպանել: Հովսեփին ընտանիքով Յեղիպտոս փախավ և վերադարձավ միայն Հերովդես թագավորի մահից հետո:

Հս Մարկոսի. Մարկոսի ավետարանում այս բոլորի մասին վոչ մի խոսք չի գրված: Վոչ ասող, վոչ մողեր, վոչ Հերովդես—վոչինչ չկա: Հիսուսն արդեն իբրև հասակավոր մարդ ինչ վոր տեղից գալիս է Հորդանան գետում մկրտվելու:

Հս Ղուկասի. Ղուկասի ավետարանում դարձաբաց կերպ է: Ալտեղ հրեշտակն առաջ Մարիամի մոտ է զալիս ու ասում նրան, զոր նրանից ծնվելու յե Հիսուսը: (Ավետումն. տես նկար 11): Հետո Մարիամն իր մարդ-Հովսեփի հետ գնում են Բեթղեհեմ, Ոգսաթոս կալսրի հրամանի համաձայն ցուցակագրվելու: Այստեղ ծնվում է Հիսուսը:

Այդ տեղի յե ունենում այրի մեջ, վորովդետե հյուրանոցներում տեղ չի լինում: Մարիամը Հիսուսին գնում է մսուրի մեջ: Հետո հովիվերը գնում են յերկրպագելու: Հետո Հովսեփին ու Մարիամը Հիսուսի հետ գնում են Յերուսաղեմ:

Այդ ավետարանումն ել չկա վնչ մոգեր,
վնչ Հերովդես, վնչ փախուստ զեպի Յեղիպառու:
Իսկ ուրիշ բան ե ավելանում՝ «Ավետումն», հո-
վիմներ, մսուր:



«Ավետումն»: Հրեանկն ասում է՝ վոր նա կրծնի Հի-
սուսին

Աս Հովանեսու: Զորբորդ Հովհաննու ավետարա-
նից վոչինչ հասկանալ չի կարելի: Այստեղ Հի-
սուսը վոչ վորից չի ծնվում, այլ ասվում ե, թե
նա միշտ յեղել ե դա ինչ վոր «խոսք» ե: Հե-

տո այդ «խոսքը» իբր թե Քրիստոս ե դառնում:
Ինչ վոր անհասկանալի յե:

Ահա թե ինչ ե զրված այդ «սուրբ զրքում»
Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին.

Յեթե հետևենք, թե ավետարանում ինչպես
ե գուրս ըերված Հիսուսի ազգականները—տղա-
մարդիկ (հայրը, պապը, պապիպապը ևայն),
ապա կըտեսնենք, վոր Մատթեոսի ավետարա-
նում Հիսուսից մինչև Դավիթ (հրեաների մեջ
արդարիսի մարդ յեղել ե) այդ ազգականները
29 են, իսկ Ղուկասի ավետարանում—43: Յեւ
համարյա բոլոր անուններն իրար չեն բռնում:


Հիսուս Քրիստոս ի՞նչ ե ստացվում: Ահա թե ինչ:
չի յեղել: Այն ժամանակվա վոչ մի պատ-
մության մեջ Քրիստոսի մասին վոչ մի խոսք չի
գրված: Յեվ միան հնարովի «Քրիստոսի ծնուն-
դից» 150 տարի հետո զրել են աերտերները և
զրել են այնպես, վոր յուրաքանչյուր մարդ, ով
զեթ մի փոքր հասկանա այդ «գիրքը», ապա վոչ
մի գեալքում չի հավատա:

Նշանակում ե Քրիստոսը չի յեղել: Նրան
ել, ինչպես և Բուդդային, Կոնֆուցիոսին և մյուս
«փրկիչներին» հնարել են:

Ուրիշ ծովուրդ- Սակայն հնարելն ել դժվար չեր-
եցի մոս: Պրեթե այն բոլորը, ինչ վոր

պատմվում է Քրիստոսի մասին, գոյություն գունեցել վոչ թե 1926 տարի սրբանից առաջ, առ 3924 և ավելի:

Յեղիպտոսում, որինակ, զիտնականները մի տաճարի պատերի վրա պատկերներ են գտել փորմնք շինված են քրիստոնեական տարեթից



Յեղիպտական ասվածն ասում է աղջկան՝ վոր օա վորդի կունենա (համեմատի՛ր նկար 12-ի նետ):

2000 տարի առաջ: Մի պատկեր ցուց է տալիս, թե ինչպես է Յեղիպտոսի աստվածը կույս-քրոմունուն ասում (հիշիր քրմերի մասին), վոր նրանց

բանից թագավոր կը ծնվի: Իսկ մյուսը—թե ինչպես հասարակ մարդիկ և յերեք թագավոր յերգողագելու լեն այդ ծնված մանկանը:

Այս բոլորը շատ նման են «Ավետամանը», և մողերի ու հովիվների Հիսուսին յերկրպագելուն (տես նկար 13 և 14):


Հենց նույն յեղիպտացիք հավատում ելին աստվածունի կույս Իզիդավին, վոր իբր թե զոմում ծնել է Հորուս աստծուն ու նրան զբել և մսուրի մեջ: Իսկ հետո իբր թե այդ աստվածունին ստիպված յեղավ Յեղիպտոսից փախչել, վորովհետև կամենում ելին Հորուսին սպանել (տես նկար 15):



Յերկրագուրյուն յեղիպտական աղջիկ-երևենուց ծնված զավակին: (Համեմատի՛ր նկար 11-ի նետ):

Իսկ և իսկ այսպես ե, ինչպես ավետարանների մեջ, միայն թե Հորուսի փոխարեն Հիսուս է: Հնդկական Բուդդայի և չինական Կոնֆուցիոսի մասին մենք արդեն խոսել ենք: Հիսուսը նրանց ել նման է:

Ավետարաններից և 1000-ել ավելի տարիներ առաջ ուրիշ ժողովուրդների մեջ ել նույնպես յեղել են «աստվածամայրեր»: Ահա հին Հայութի աստվածուհու—Յունոնացի պատկերը. կինը նըստած կերպակրում է յերեխային (տես Նկար 17): Համարյա իսկ և իսկ այնպես, ինչպես այժման «Աստվածածինը»:



Նկ. 15 Զախից—յեզիրական աստվածածին Խղիդան իշի վրա նսած իր մանկանը տանում է Յեզիրանու:
Աջից—Յարանսիայում յեկինեցու պատի վրա փորված է ուղղափառների աստվածածինը, վոր Հիսուսին զիրկն առած իշի վրա փախցնում է Յեզիրանու

Յեկ հին ժամանակներում գոյություն՝ ունեցին բազմաթիվ այլպիսի աստվածներ: Յերբ ավետարանները գրում են, այն ժամանակ բո-

լոր այդ պատմությունները վաղուց ի վեր արդեն կալին: Տերտերներն ել ուրիշ ժողովուրդներից քիչ-քիչ վոխ առնելով նրանց աստվածների մասին յեղած հեքիաթները, իրենք ել նույնպիսի հեքիաթ են գրել Հիսուս Քրիստոսի մասին:



Յեզիրական աստվածածին Խղիդան Գորուս ասծուն գրկին

Աստծուն հավատալուց հասած վասր աշխատավորներին:

Ժահագործումն Մարգիկ վաղուց արդեն բառաց յեվ այժմ: Ժանվել են յերկու մասի, գործն-

ցից մեկը, փոքրը ոգտվում եր բոլոր բավականություններից, իսկ մյուս, մեկը՝ տանջվում եր: Այն ժամանակվանից, յերբ այդ տեղի ունեցավ, գեղի աստվածներն ունեցած մարդկանց հավատը վոմանց ոգնում եր ավելի լավ ապրել, իսկ մյուսներին, ընդհակառակը՝ ավելի յեր դժբախտացնում:

Այդ տեղի յեր ունենում այն պատճառով, վոր յերջանիկները, պետերը, թագավորներն ու հարուստները միշտ հարմարվել են տերտերների հետ և «աստծո որենքներն» այնպես ելին կազմվում, վոր ոգնում ելին նրանց շարունակ ավելի ու ավելի քամել աշխատավորների հութերը, ձնշել և խաբել նրանց կամ ինչպես ասում են, շահագործել:

Նախադարյան մարդկանց հարստությունները մեծ չելին՝ մսի մի ավելորդ կառը կամ զաղանի մորթի: Այն ժամանակ շահագործումն ել այնքան մեծ չեր. քուրմավագը մեծ բաժին եր ստանում միան ձեռք բերած կերակուրը բաժանելիս, ու դրա վրա մի բան ել վոգիների համար:

Բայց յերբ արտադրությունը լավացավ և այնպես դարձավ, ինչպես այժմ ե, մարդկանց հարստությունները խիստ մեծացան:

Ինչ ենք այժմ մենք տեսնում: Բազմաթիվ Փարբիկաներ և գործարաններ, փորտեղ պատրաստվում են հսկայական չափերով կոշիկներ, մահուդ, թուղթ, դանակներ, թել զանազան մթերքներ և այն, տեսնում ենք հարյուրավոր և հազարավոր վագոններ, շողեշարժեր և այերու-



Հին Հռոմեական աստվածածին Յունոնի պլաններ, տեսնում ենք հսկայական դաշտեր ցորենով ցանկած ևալին, ևալին:

Յեվ բոլոր այդ հարստությունները, զրեթե

ամբողջ աշխարհում պատկանում են մի բուռն հարուստների։ Յեվ մնացած այն բոլոր աշխատավորները, վորոնք այդ հարստություններն ըստեղծել են իրենց ձեռքերով, վոչինչ չունեն ու սովից ուռչում են։



Հին Հունաստանի տսակածածին Դեմետրան

Սրա պատճառն այն է, վոր դեռ այն ժամանակից ինչպես վոր շահագործումն սկսվեց նախադարյան մարդկանց մոտ, այնպես ել մինչև որս շարունակվում է զրեթե ամեն տեղ։

Նախագործմանն Շահագործողներին նրանց ավանդանում եղին գակալին գործում շատ ելին ողջին տերեւները։ Նում տերտերները, զանազան միտրոպոլիտները, պատրիարքներ, այդ բոլոր աստծու սպասավորները (ինչպես իրանք իրենց անվանում են)։

Ի՞նչ ելին զրում տերտերները «կրոն»-ում թագավորների մասին։ Թագավորն, ասվում եր այնուեղ—աստծու ուղարկվածն է, իշխանությունը նրան աստված է տվել, յերկրի վրա նա «աստծու վողորմությամբ» է թագավորում։

Մուսաց թագավորներն ել իրենց հրամանների մեջ զրում ելին. «Վողորմությամբն ասծո» մենք Նիկոլայ (կամ ով լինում եր՝ Պետրոս, Աղեքսանդր ևայլն) մեծ ինքնակալ համայն մուսաստանի»...

Հենց նույն ձեռվ տերտերները պաշտում ելին հարուստներին։

Իսկ աղքատ մարդկանց միիթարում ելին նրանով, թե աշխարհի տառապանքների համար նրանք յերկնքում յերանություն կըվայելեն։ Բայց այդ ել միայն այն ժամանակ, յեթե այնպես անեն, ինչպես «կրոնն» է հրամայում։ Իսկ «կրոնը» Տերտերների ձեռքով է զրված և հրամայում է հավատալ աստծուն, լսել թագավորին,

տերտերներին, հարուստներին և յեկեղեցի զնալ, տերտերներին փող տալ, չտրտնջալ, չարին չընակառակիել և բոլոր նվաստացումներին ու պակասություններին դիմանալ: «Աստված, ասում են, համբերել ե, դուք ել պետք ե համբերեք: Հիսուս Քրիստոսն ասել ե՝ յեթե աջ յերեսիդ կըխփեն—ձախդ ել գեմ արա»:

Յեկ վորպեսզի խավար ժողովրդին ել ավելի վախեցնեն, անեղ դաստատանի, արքայության, դժողի մասին ինչ վոր հեքիաթ են հնարել: Ասում են, վոր կըգա այնպիսի րոպե, յերբ աստված կակսի բոլոր մարդկանց դատել: Բոլոր մեռենները հարություն կառեն և կըդան դատաստան: Նրանք, ովքեր կատարել են «կրոն»-ի պատվերները, արքայություն կընկնեն, խակ նրանք, ովքեր չեն կատարել՝ դժողք: Տերտերների ասելով արքայությունն այնպիսի մի տեղ ե, ուր միմիան յերանությունն ե: Խակ դժողքում, ասում են նրանք, — հավիտենական կրակ ե և սատանաները շարունակ տանջում են մեղավորներին:

Տերտերներն իւենիք Յեկ այգպես վախ ներշնչելով, ծուլսվրդին շատ տերտերներն իրենք ամեն տեսակ հագործում են: Պարշելի բաներ անում են ու նույնպես շահագործում ժողովրդին: Հավատացյալ մարդն ստիպված է ծննդի որից մինչև մահը տերտերների հետ գործ ունենալ: Յեկ ամեն քայլափխում պետք է նրանց փող տա: Յերեխա յե ծնվել, տանում են մկրտելու: Տերտերը

ձեռքը մեկնում ե՝ տուր: Մարդիկ ամուսնանում են՝ ելի տուր:

Յեկեղեցի յեն գալիս ազոթելու— «աստծու տաճարի» համար, զանձանակ են ման ածում, բայց իրոք տերտերների համար: Խելքիդ փչեց ազգականներիդ հիշատակել, ելի պետք ե տալ: Թե խոստովանության և թե հաղորդության համար նույնպես վերցնում են: Յերբ մարդը մեռնում ե, այստեղ ել, վորովիշետե տերտերը «հավերժ հիշատակ» ե յերգում,— ելի հարկավոր ե տալ:

Իսկ չկատարել այդ բոլոր ծեսերը չի կարելի՝ դժողով կընկնես:

Մակայն այդ տերտերների համար քիչ եր: Նրանք ամեն տեսակ խաղեր ելին հնարում, վորպեսզի ավելի շատ փող ճանկեն:

Կամ իբր թե «հրաշագործ սրբապատկեր» ելին գտնում, կամ թե՝ սուրբ մատունքներ:

Խավար ժողովուրդը չգիտեր, վոր իրեն խարում են ու խմբերով գնում եր յերկրողագելու այդ «հրաշներին»: Խսկ տերտերներն իսկույն-կեթ սկսում ելին փող հավաքել:

Բացի այս բոլորից, գեռ զանձարանն ել (պետությունը) տերտերներին ոռնիկ եր տալիս:

Նրանց համար զանձարանից տարեկան բաց եր թողնում 50,000,000 սուրբի:

Խնդիր.— Հաշվիր (մոտավորապես), այդ տեղից տարեկան քանի ծառայող կարելի յի պահես յեթե վճարենք յուրաքանչյուրին 45 սուրբի:

Այդ փողերից լենինգրադի միաբռպոլիտը
(ամենանշանավոր տերաւերներից մեկը) տարեկան 300,000 ռ.:

Խնդիր.—Համեմատիր այդ միաբռպոլիտի ռոճիկը և աշխատանքը ընկ. Պետրովսկու աշխատանքի և ռոճիկի հետ (ընկ. Պետրովսկին ամսական 180 ռուբ. և ստանում):

Բայց այս դեռ բոլորը չեն գալով ժամ ուժեղ կերպով շահագործում ելին նաև վանեցը:



Հավաքվում եր մարդկանց մի փոքր խումբ, փոքր ասում եր, թե մեղք և համարում ապրել այնպես, ինչպես բոլորն են ապրում: Ասում եր, փոքր պետք ե շարունակ աշխատել ու միշտ աղոթել աստծուն: Քրա համար նրանք հուզ ունեցն արքայություն ընկնել: Հեռանում, գնում ելին անտառի մեջ փորեկ տեղ, իրենց համար փոքրիկ խրճիթ ելին շինում և ապրում: Բոլորը նրանց սուրբ մարդիկ ելին անվանում, կուսակրոն (МОНАХ), իսկ այն տեղը, վորտեղ նրանք ելին ապրում, վանք ելին անվանում:

Վանքերն սկզբում իրոք աղքատ են յեղել և առաջին կուսակրոնները շարունակ աշխատել են և աստծուն աղոթել: Բայց աստիճանաբար վանքեր ելին գալիս ուրիշ մարդիկ և խնդրում իրենց ել ընդունել նրանց մոտ մեղքերից փրկվելու համար: Վանքերի մասին խմանում ելին թագավորները, իշխանները և այլ հարուստ մարդիկ: Նրանք խնդրում ելին իրենց համար ել աղօթել աստծուն և դրա համար նրանց փող և հող ելին տալիս:

Ազգային վանքերն աստիճանաբար ավելի և ավելի հարստանում ելին: Կուսակրոնները գաղարեցին աշխատելուց—արդեն դրա պետքը չկար և սկսեցին ժողովրդին շահագործել:

Յուրաքանչյուր վանքին կից, ի հարկե, յեղեղեցի կար, իսկ միքանիսում ել վորևե՛ «սրբի» ծառունքներ, կամ հրաշագործ սրբապատկերներ: Դրա համար ել գնում ելին այնտեղ «յերկրպագելու» և փող ելին տանում: Նվերների այդ բոլոր փողերը կուսակրոնները պտույտի մեջ ելին դնում—շինում ելին աներ, հյուրանոցներ, խանութներ և այդ բոլորից մեծ վասարակներ ելին անում: Կամ թե չե փողը պարտ ելին տալիս ու դրա համար վճար (տոկոսներ) վերցնում: Յերբ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքն եր, շատ վանքեր սեփական գյուղացիներ ել ունեցին: Տրոյից-Սերգեևկի լավրան (այդպիսի վանք կար) 106,000 հոգի ճորտ գյուղացի ուներ, մինչդեռ ամենահարուստ կալվածատերերից մեկը (Շերեմետե), 44,000 հոգի միայն:

Ճորտերի հետ կուսակրոնները վարվում ելին այնպես, ինչպես և բոլոր կալվածատերերը՝ նրանց ծաղրում ելին, ծեծում և ստիպում աշխատել իրենց համար:

Թվանշաններ: Ահա թե հեղափոխությունից առաջ Ռուսաստանում ինչքան վանքեր, տերաերներ և վարդապետներ են յեղել և ինչ են ունեցել նրանք.

Յեկեղեցիներ 52,869

Վանքեր տղամարդկանց	455
» կանանց	418
Տերտերներ և նրանց ողնականներ (սարկավագներ և տիբացուներ)	160,690
Կուսակրոններ (մոհաք)	19,520
Կույսեր	60,820

Յեկեղեցիներն ու վանքերն ունեցին ընդամենը 2,605,635 գեսլատին հող: Այս հողից բաժին եր ընկնում:

Սոլովյոցկու վանքին	66,000 գես.
Սարովսկոյի անապատին	28,000 »
Ալեքսանդր-Նևսկու լավրացին	25,000 »

Միայն Մոսկվայում յեկեղեցիներն ունեցին 1054 յեկամուտ բերող տուն, նույնպես և 32 հյուրանոց:

Հեղափոխությունից առաջ Ռուսաստանում կար 231,000 մարդուց ավելի հոգեորականություն:

Յեկ այդ բոլոր պարագիտներն ու անգործները նստած աշխատավոր ժողովրդի վզին, հարբեցողությամբ և այսպակություններով ելին զբաղված ու փորերն ելին հաստացնում, իսկ աղքատը վերջին կոպեկը «սուրբ տաճարի գանձանակին եր տալիս:

Ի՞ՆՉ ԱՐԵՑ ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1917 թվի Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո Ռուսաստանում իշխանությունը բանգորների և դյուլացիների ձեռքն անցավ: Նրանք վոնդեցին իրենց շահագործողներին—թագավորին, կալվածատերերին և կապիտալիստներին ու ըսկաեցին պրոլետարական պետություն կառուցել:

Սակայն դեռ միքանի շահագործողներ մնում ենին—դրանք տերտերներն ենին: Նրանց հետ ել Խորհրդացին իշխանությունը վարվեց այնպես, ինչպես հարկն եր:

Յեկեղեցին պետ Խորհրդացին իշխանության առողջութիւն անուածից անուածին գործն այն յեղավ, վոր

ջատելը, հայտարարեց թե յեկեղեցին անջատվում է պետությունից:

Ահա թե ինչ է նշանակում այդ: Առաջ տերտերները պաշտպանում ենին պետությանը, թագավորին և բուրժուազիային, իսկ փոխարենը պետությունն ողնում եր տերտերներին—նրանց ոռծիկ եր տալիս և այդպես եր անում, վորպեսզի ավելի շատ մարդկանց հարկադրի ա-

ղոթել այն աստծուն, վորի մասին քարոզում ենին (ուղղափառ) տերտերները:

Դրա համար այն բոլոր մարդկանց, սկզբ թեկուց մի քիչ շեղվում ենին այն հավատից, վորպիսին ունեցին տերտերները կամ ովքեր բոլորովին չենին հավատում աստծուն—պետությունը հալածում եր: Յեվ մի վորեե կարևոր պաշտոնի առաջին հերթին ընդունում ենին հավատացյալ «ուղղափառներին»: Իսկ մի քանի ուրիշ կրօնների մարդկանց նույնիսկ բոլորովին չենին ընդունում: Հրեաներն, որինակ՝ թագավորական բանակում սպաներ լինել չենին կարող, չենին կարող լինել ուսուցիչներ և շատ ուրիշ պաշտոններում: Լիներին ել նույնպես ամեն պաշտոնի չենին ընդունում: Խորհրդացին իշխանությունն այդ բոլորը փոխեց, յերբ հրատարակեց յեկեղեցին պետությունից անջատելու դեկրետը:

Այժմ ամեն մարդ կարող է հավատալ ինչ աստված վոր կամենա, կամ վոչ մեկին չհավատալ—դա պետության գործը չե: Դրա համար նա վոչ վորի չի հալածում, չի պատժում:

Ի հարկե Խորհրդացին իշխանությունը տերտերներին փող տան ել վերջացընեց:

Դպրոցի անջատութիւնն անդամից հրատարակեց միտումը յեկեղեց անդամից հրատարակեց մի ուրիշ գուց: Պեկրետ ևս՝ դպրոցը յեկեղեցուց անջատելու մասին:

Այդ գեկրետը նշում եր, վոր վոչ մի զբաց-
րոցում յերեխաներին չի կարելի «կրոն» սովո-
րեցնել, բոլոր սրբապատկերները պետք է զբա-
րոցներից դուրս գցել և բոլոր տերաբերները պետք
ե անտեղից դուրս կորչեն:

Խորհրդացին իշխանությանը հարկավոր չե,
վոր տերաբերներն աստծու մասին հեքիաթներ
պատճեռվ մթափնեն յերեխաների միտքը:

Դա ցարական կառավարությանն եր հար-
կավոր. նրան հարկավոր եր, վոր մարդիկ հավա-
տին աստծուն, այդ պատճառվ ել առաջ յու-
րաքանչյուր գլուխում «կրոն» սովորեցնելը
պարտադիր եր: Մանկությունից սկսում ելին
այդ գլուխները լցնել և յերեխաները մեծանում
ելին աստծուն և սատանալին հավատարով սար-
սափած ահեղ դատաստանով ու դժոխքով:

Ազգայնացում: Մուս գեկրեաներով բանվորա-
գլուխիական իշխանությունը տերտերներին
զրկեց ժողովրդին շահագործելու շատ հնարավո-
րություններից. բոլորը, ինչ վոր ձեռք եր բերգած
աշխատավորների կոշտացած ձեռքերով, տերտեր-
ներից խլվեց (ազգայնացվեց): Խեցին յեկեղե-
ցապատկան տները, հյուրանոցները, խանութնե-
րը, հողերը և այլն:

Վանքերը փակվեցին, վարդապետներին ու

կույսերին հեռացրին, վոր գնան ու աշխատեն.
աշխատավորների հաշվին չի կարելի ապրել:
Իսկ վանքապատկան շենքերը վերածվեցին բան-
վորների բնակարանների, կամ՝ մանկանց քա-
ղաքների:

Վանքապատկան իսկ յերբ Խորհրդացին մեռսաւ-
արձենելեր: տանի գլխին մեծ գժբախտու-
թյուն յեկավ — 1921 թվի անբերրիությունը, յերբ
հազարավոր մարդիկ մեռնում ելին սովոր, Խոր-
հրդացին իշխանությունը զբավեց յեկեղեցիների
վոսկին, արծաթը և թանգարժեք քարերը (յեկե-
ղեցապատկան արժեքները), վորպեսզի սովոր-
ների համար հաց գնի:

Տերտերները միայն ուրիշներին ելին ասում,
վոր պետք ե ոգնել իր մերձավորին, իսկ իրենք
յերբեք այդ չելին անում: Յեկ յերբ 1921 թ.
Ռուսաստանում, Վոլգայի շրջանում, մայրեն ի-
րենց յերեխաներին ելին ուտում, մեր «Կուրք
հայրերը» հանգիստ տրաքվում ելին համեղ ձա-
շերով: Վոչ մի յեկեղեցի չեր մտածում կամո-
վին իր թանգարժեք իրերը սովորների ոգախն
տալու: Իսկ թանգարժեք իրեր շատ-շատ կային: Յերբ
Խորհրդացին իշխանությունը ձեռք զարկեց
այդ զործին, ապա ամբողջ փթերով վոսկի ու
արծաթ և հարյուրավոր թանգարին քարեր զր-
տագ, վոր թաղված ելին յեկեղեցիների նկուղ-
ներում:

Ել ի՞նչ ե արված: Վորպեսզի բոլորի համար պարզ
մնի թե աստծու խնդիրը, թե տերաբերների

խնդիրը և թե այն, վոր կատարվում է մեր շուրջը, Խորհրդացին իշխանությունը կազմակերպում է բոլորի համար մատչելի և հասկանալի դաստիոսություններ ու գրաւցներ, վորտեղ պատմում են իերկրի, իերկնքի, արեգակի մասին, թե այդ բոլորը ինչպես են առաջացել, ինչից և ինում վորությ կաջակը, անձրկը և այլն: Պատմվում է նույնպես և այն մասին, թե ինչպես և առաջացել աստված և ինչու հարկավոր չե հավատալ և աղոթել նրան: Յեզ «հրաշագործ սրբաւատկերների և մասունքների մասին ամեն ինչ բացարկում է: Խորհրդացին իշխանությունը նույնպես հրամայեց մասունքները մերկացնեն և բոլորը տեսան, վոր գրանք մոմից կամ լամերից շինած ու ամեն անպետք իրերով լցրած տիկնիներ են: Այս բոլորի մասին շատ գրքեր են արդիած և այժմ ել տպվում են:

Գաղտառում են Ամբողջ աշխարհում, բայցի Խորասծուն հայտա հրդացին հանրապետություններուն: Իրեկու դասակարգերի միջի ամբողջ աշխարհում պայքար և տեղի ունենում: Այդ պայքարն արդեն շատ վաղուց և մղվում: Յեզ շարունակ աշխատավորներն ստիպված են սարսափելի կարերի մեջ ապրել, առեն տեսակ զրկանքներով, ցրափ և քաղցի մեջ:

Զարմանալի չե, վոր այդ մարդիկ հայտառում են այն բանին, թե մահից հետո այնտեղ, գրախ-

տումն, ավելի լավ կյանք կրլինի, համառում են աստծուն: Հույս են ունենում, թե զոնե իերեկավոցի կյանքը կրփոխիմի: Գոնե մյուս աշխարհում:

Բայց այժմ, իերբ Մուսաստամում իշխանությունն իր ձեռքը վերցրեց հենց պրոլետարիատը, նա տեսափ, վոր լավ կյանք ինքը կարող ե ստեղծել հենց այստեղ, աշխարհում:

Չի լինի կալվածատիրոջ և կապիտալիստի ճիպուրը, այլ ինքը բանվորը կրլինի իր տերը, նա կյանքը կրկառուցի այնպես, ինչպես ինքը կրցանկանա, ինչպես ավելի լավ է: Միանդամից այդ անել չի կարելի, բայց և այնպես կարելի է: Յեզ հավատը դեպի մահից հետո լինելիք յերշանձիկ կյանքը, դեպի արքայությունն ու գժութը, դեպի աստված ու սատանան, շատ ուսու բանվորների մեջ քիշ-քիչ սկսել և չքանալ:

Այժմ ՍիօՆ-ի մեջ միլիոններով են հաշվառում այնպիսինները, վորոնք ընդունիշտ հրաժեշտ են ավել աստծուն:

Այս բանում շատ ոգնեց նաև այն ամենը, ինչ վոր աստծու և նրա սպասավորների մասին արել, գրել և պարզաբանել ե Խորհրդացին իշխանությունը:

Ի՞նչ տիեզ և անեն Հավատացյաներ գեռ շատ կան պատահի լենի: (Նրանք ավելի շատ են): Հատեականեները: կապես ծերերը: Նրանք համար նույնիսկ վոչինչ լսել չեն ուզում: Նրանք ասում են. «մեր պապերը և պապի պապերը աստծուն հավատացել են, մենք ել պետք և հավատանք»:

Յեզ չեն ել ուղում հձանալ, վոր նրանց պապերն ու պապի պապերը յերկրպագելիս են յեղել ոձերին ու կոկորդիլոսներին։ Այդպիսիներին արդեն փոչինչ հասկացնել չի կարելի։ Թող աստծուն հավատալով ել ապրեն։

Բայց այժմ կան աստծուն հավատացող շատ յերիտասարդներ ել, նույնիսկ յերեխաներ։ Ապրում են այնպիսի ընտանիքներ, ուր հավատում են աստծուն, և իրենք ել առանց հասկանալու, հավատում են։ Անա հենց զբանց հետ ե, վոր պատանի կենինականները պետք ե հաճախ խոսեն աստծու մասին։

Դպրոցում, մանկատանը, փողոցում—վորտեղ առիթը գա, պատանի կենինականները պետք ե աստծուն դեռ հավատացող ընկերներին պատմեն ճշմարտությունը։ Պետք ե պարզաբանեն՝ ի՞նչպես և յերբ են առաջ յեկել աստվածները։ Ի՞նչպես և ի՞նչու են նրանք փոփոխվել։ Ի՞նչպես ստացվեց այն աստվածը, վորին այժմ մարդիկ հավատում են։

Պետք ե տերտերների մասին ել ամեն ինչ պարզաբանել, թե ինչպես ելին նրանք շահագործում ժողովրդին, թագավորների ու հարուստների հետ միասին խարում նրան և նրա աշխատանքի կոպեկներով ճարպակալում։

Պատանի կենինականների այդպիսի աշխատանքը Արքունական իշխանության մեծապես կոչման ամեն կոմմտոնիստական հասարակութունն ստեղծելու գործում դեպի վորը գնում ենք։

ԳԻՆՆ Ե 30 Կ.



